

«Հաստատում եմ»

Երևանի Անանիա Շիրակացու անվան ճեմարանի

Տնօրեն՝ \_\_\_\_\_ Աշոտ Ալիխանյան

« »

2018թ.

**«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ**

### ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

#### ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Միջազգային բակալավրիատի դիպլոմային ծրագիր (այսուհետ՝ ՄԲԴԾ) ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով՝ ընդունելության քննությունների և հարցազրույցների հիման վրա: ՄԲ դիպլոմային ծրագրում սովորելու համար կարող են դիմել՝
  - ՀՀ քաղաքացի հանդիսացող հանրակրթական ուսումնական հաստատությունների 10-րդ և 11-րդ դասարանն ավարտած սովորողները:
  - օտարերկրյա քաղաքացի հանդիսացող սովորողները՝ ավագ դպրոցի վերջին երկու տարիների կրթական ծրագրի համար:
2. Ցանկության դեպքում ՄԲԴԾ շրջանավարտները կարող են ստանալ նաև ՀՀ պետական նմուշի ատեստատ՝ բավարարելով «Շիրակացու ճեմարան»-ի ընդունելության և ՀՀ պետական ավարտական քննությունների պահանջները:
3. ՄԲԴԾ դիմորդները հանձնում են քննություններ մաթեմատիկայից և անգլերենից: Քննությունների պահանջները համապատասխանում են հանրակրթության պետական չափորոշիչի պահանջներին:
4. Քննությունները հաջողությամբ հանձնած սովորողները (մաթեմատիկայից անհրաժեշտ է հավաքել առավելագույն միավորների առնվազն 40%-ը, անգլերենից՝ 60%-ը) մասնակցում են հարցազրույցների՝ ՄԲԴԾ-ի շրջանակներում իրենց կողմից ուսումնասիրվելիք առարկաներից:
5. Միավորների նվազագույն շեմը չհաղթահարած, սակայն հարցազրույցների արդյունքներով անհրաժեշտ պատրաստվածություն ցուցաբերած դիմորդները ընդունող հանձնաժողովի որոշմամբ կարող են ընդունվել ՄԲԴԾ պայմանական կարգավիճակով՝ թափուր տեղերի առկայության պայմաններում՝ մեկ կիսամյակ ժամկետով: Կիսամյակային արդյունքների (առաջադիմություն, ՄԲ սովորողի նկարագրի և համապատասխանություն) ամփոփման հիման վրա տնօրենության խորհրդի որոշմամբ՝ սովորողը շարունակում է կամ չի շարունակում ուսուցումը ՄԲԴԾ-ում:

6. ՄԲԴԾ-ից դուրս մնացած սովորողը, եթե ճեմարանի սան է, թափուր տեղերի առկայության դեպքում տնօրենության խորհրդի որոշմամբ կարող է ուսումը շարունակել ճեմարանի ազգային ծրագրում: Իսկ այլ դպրոցներից ՄԲԴԾ ընդունված և դուրս մնացած սովորողները ճեմարանի ազգային ծրագրով ուսումը շարունակելու համար պետք է հանձնեն ընդունելության քննություններ՝ համաձայն ճեմարանում գործող ընթացիկ ընդունելության կանոնների:
7. Ընդունելությանն առնչվող չնախատեսված բոլոր հարցերը վճռում է ընդունող հանձնաժողովը:
8. Ճեմարանի ՄԲԴԾ ընդունելությանը մասնակցելու համար դիմորդները լրացնում են հայտ՝ հետևյալ <https://goo.gl/vV4MFx> հղումով:
9. Մրցույթով անցած ճեմարանի սան հանդիսացող դիմորդները պարտավորվում են ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.
  - Դիմում
  - Երաշխավորագիր-բնութագիր կրթօջախի երկու աշխատակիցներից
  - 4 լուսանկար (3x4)
10. Մրցույթով անցած ճեմարանի սան չհանդիսացող դիմորդները պարտավորվում են ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.
  - Դիմում
  - Ծննդյան վկայականի կամ անձնագրի պատճեն
  - Տեղեկանք առաջադիմության մասին կամ «Մանի անձնական գործ»
  - Հիմնական կրթության վկայական
  - Երաշխավորագիր-բնութագիր կրթօջախի երկու աշխատակիցներից
  - 4 լուսանկար (3x4)
  - Տեղեկանք բնակավայրից
  - Տեղեկանք առողջության մասին (ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով):
11. Մրցույթով անցած դիմորդների և նրանց ծնողների հետ կնքվում են պայմանագրեր, իսկ ճեմարանի սովորողների ծնողների հետ՝ գործող պայմանագրերին կից համաձայնագրեր:
12. Մրցույթով անցած ճեմարանի 10-րդ դասարանից փոխադրված դիմորդներին կարող են տրամադրվել ֆինանսական արտոնյալ պայմաններ.
  - հիմք ընդունելով սովորողի 10-րդ դասարանի առաջադիմությունը, ընդունելության արդյունքները,
  - ընտանիքի ֆինանսական կարգավիճակը: